ՂԶԼԱՐՈՒՄ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (XIX դ.)

Լ. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ

Հայ ժողովրդի պատմական ճակատագրով, միաժամանակ Ռուսաստանի քաղաքական ու տնտեսական որոշակի շահախնդրություններով էր պայմանավորված XVIII դարում Ղզլարում հայ համայնքի ձևավորումն ու հետագա ստվարացումը։ Ղզլարի հայ համայնքը նկատելի ներդրում ունեցավ Երկրամասի տնտեսական յուրացման դժվարին ու կարևոր խնդրում։ Պակաս կարևոր չէր հայ համայնքի դերն ու մասնակցությունը XVIII—XIX դդ. հայ-ռուսական հասարակական-քաղաքական հարաբերություններում։ XIX դարում Ղզլարում կար ազգային դիմապատկեր ունեցող և հայրենիքից չխորթացած հայ համայնքը։ Վերջինս կարողացավ ստեղծել նաև բավական ուրույն, բնույթով ազգային մշակույթ։

Ղզլարը Հյուսիսային Կովկասում կրթական կյանքի աչքի ընկնող կենտրոն էր։ Դպրոցը, աճող սերնդի կրթության և լուսավորության գործը հայ համայնքի առաջնահերթ և հրատապ խնդիրներից էին, և այդ էր պատճառը, որ գաղթավայրի աշխարհիկ և հոգևոր գործիչներն իրենց ուշադրությունը բևեռում էին հատկապես այդ խնդրի վրա, ձգտելով շուտափույթ լուծում տալ հարցին։ Հայաշատ այս գաղթավայրում դպրոցական գործի կազմակերպումը խոչընդոտներով լեցուն ուղի է անցել, որը պայմանավորված էր մի կողմից Երկրամասի ռազմաքաղաքական անապահով իրավիճակով, մյուս կողմից՝ համընդհանուր հետամնացությամբ, դպրոցները նյութական անհրաժեշտ միջոցներով և ուսյալ կադրերով մշտապես ապահովելու անհնարինությամբ և այլն։ XVIII դարի վավերագրերում Ղզլարում հայկական դպրոցի գոյության մասին հիշատակության չենք հանդիպում։ Պետք է ենթադրել, որ հայ մանուկների կրթության և դաստիարակության գործով եկեղեցական իշխանություններին ենթակա մտնավոր դպրոցներում զբաղվել են տեղի հայ քահանաները։ Այդ դպրոցներում դասավանդվել են կրոն, հայերեն ընթերցություն, թվաբանություն և այլն։ XIX դարի 20-ական թթ. վերջի վավերագրերից մեկում[1] (դա ղզլարահայ համայնքի վկայականն է տրված Աստրախանի Ս. Լուսավորիչ եկեղեցու սարկավագ Գևորգ Արտեմի Սուքիասովին) ղզլարահայերը հիշատակում են Դ. Սուքիասովի հորը՝ Արտեմ Սուքիասովին, որը թեմի առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսի կողմից 1805 թ. Ղզլարում նշանակվել է ուսուցիչ։ Ղզլարահայերի արտահայտությամբ, այդ ժամանակ քաղաքում ոչ մի ուսումնական հաստատություն գոյություն չի ունեցել։ Մեզ հասած պատառիկ վավերագրերից եզրակացնում ենք, որ ղզլարահայերը փորձել են դպրոց բանալ (իրենց իսկ արտահայտությամբ՝ տվելի քան 400 աշակերտ կհավաքվեր, իսկ բացվելիք ուսումնարանի համար մշտապես նախատեսվել է 50—60 աշակերտ), սակայն դժվարությունների են հանդիպել, քանի որ Ա. Սուքիասովը, լինելով տարեց և վատառողջ, չէր կարող միայնակ ապահովել մայրենի լեզվով ընդհանրական կրթությունը՝ կրոն, բերականություն, ընթերցանություն, գիր, թվաբանություն և եկեղեցական երգեցողություն։ Կարծում ենք, եթե անդամ դպրոցը բացվել է, ապա շատ կարճատև կյանք է ունեցել։ Ղզլարում մեզ հայտնի հայկական առաջին վարժարանը բացվել է 1817—1818 թթ., ժամանակի աչքի ընկնող գոր-

---

[1] Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), կոդ. գիվան, թղթ. 88, վավ. 168 (ցավոք վավերագիրը թերի է և ամբողջությամբ մեզ չի հասել)։

ծիշներից Գևորգ Խուբովի (1762—1829) օգնությամբ ու մասնակցությամբ։ Գ. Խուբովը 1814 թ. բնակություն էր հաստատել Ղզլարում, հողամաս էր ձեռք բերել և կաթողիկոսի օգնությամբ կարողացել էր իր և բարեկամների ազնվական տոհմական ծագումը վավերացնող վկայականներ ձեռք բերել[2]։

Ղզլարի հայկական վարժարանը (աղբյուրներում այն երբեմն հիշատակվում է իբրև ծխական ուսումնարան)[3], որը բացվել էր դպրոցական իշխանությունների և Աստրախանի հայոց հոգևոր կոնսիստորիայի թույլտվությամբ, գտնվում էր նրանց հսկողության ներքո, կոչված էր հոգևոր ու աշխարհիկ կադրեր պատրաստելու։ Ղզլարի վարժարանը բացման տարում ունեցել է հարյուրից ավելի աշակերտներ։ Դպրոցը պահվել է մի քանի ղզլարահայերի, մասնավորապես խոջայան եղբայրների և Գևորգ Խուբովի միջոցներով։ Վերջինս ոչ միայն պաշտոնավարում էր իբրև հայոց դպրոցի ուսուցիչ, այլև իր ծախքով պահում էր 12 աշակերտ[4]։ Վարժարան հաճախող աշակերտների մեծամասնությունը ուման վարձ է մուծել, որով նույնպես հոգացվել են ուսումնարանի ծախսերը և ապահովվել է ուսուցիչների աշխատավարձը։ 1818 թ.՝ այսինքն ուսումնարանի բացման առաջին կամ հաջորդ տարում, Գ. Խուբովը աշակերտների ծնողների հետ պայմանագիր է կնքել և վերջիններս պարտավորվել են յուրաքանչյուր աշակերտի համար տարեկան 25 ռուբլի վճարել, որը, սակայն, ոչ միշտ է ժամանակին և ճշտորեն կատարվել։ Մ. Սանթրոսյանի կարծիքով, Գ. Խուբովից բացի դպրոցում դասավանդել են ևս 5 ուսուցիչներ, որոնցից 4-ը հայերեն լեզվով, մեկը՝ ռուսերեն։ Դասավանդվող գիտելիքների թվում էին՝ Հին և Նոր կտակարան, եկեղեցական արարողություն, ռուսերեն և հայերեն քերականություն, հռետորություն, թվաբանություն, առևտրական հաշվապահություն[5]։ Ուսուցչական անձնակազմի և դասավանդվող առարկաների այսպիսի առատությանը թերևս կնախանձեին XIX դարի երկրորդ կեսի ռուսահայ թեմի նյութապես ապահովված հայկական վարժարաններից շատերը։ Սակայն Գ. Խուբովից բացի այլ ուսուցիչների մասին մեզ տեղեկություններ չեն հասել։ Վերջինս դասավանդել է կրոն, հայոց լեզու և երգեցողություն։ Պահպանվել է Գևորգ Խուբովի 1825 թ. Ղզլարում գրած երգարանը՝ «Երգարան երգեցիկ մանկանց և յորդորակ սիրահար դեռավարժից», որը իբրև եկեղեցական երգեցողության ձեռնարկ է ծառայել վարժարանում[6]։ Դպրոցներն ուսումնական ձեռնարկներով ապահովելը դպրոցական գործի կազմակերպման դժվարին խնդիրներից էր ոչ միայն Ղզլարում, այլև ռուսահայ մյուս գաղթավայրերում, առավել ևս, երբ խոսքը վերաբերել է XIX դարի առաջին տասնամյակներին։ Այս շրջանում էր, որ Գ. Խուբովի հեղինակությամբ ասպարեզ են եկել մի շարք ձեռագիր աշխատություններ, որոնց տպագրության և որպես ուսումնական ձեռնարկ ծառայեցնելու խնդրում շահագրգռված էին թե՛ հոգևոր առաջնորդը և թե՛ Ղզլարի տարաշերտ հասարակությունը։ 1827 թ. հոկտեմբերին ռուսահայ թեմի առաջնորդ Հովհաննես արքեպիսկոպոսը Աստրախանի հայոց եկեղեցու ավագ սարկավագ Հովսեփ Հովհաննիսյանին Ղզլարից հայտնում է, որ վարժապետ, իշխան Գևորգ Խուբովի դաժանաքիրտ աշխա-

---

[2] Տե՛ս Լ. Մելիքսեթ-Բեկ. Գևորգ Մելիքսեդեկյան Խուրով (նյութեր և նորեր).— ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիտ.), 1950, № 1—2։ ՄՄ, կար. դիվան, թղթ. 31, վավ. 136, 140, 142։

[3] И. Савинский. Астраханская епархия (1602—1902 гг.). Вып. II, Астрахань. 1905, с. 183. Ըստ հեղինակի՝ տարրական եկեղեցական-ծխական դպրոցներից հնագույնը բացվել է Ղզլարում, Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով, Աստրախանի հոգևոր ուսումնարանի հետ գրեթե միաժամանակ (1818)։

[4] Մ. Սանթրոսյան. Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին. Երևան, 1964, էջ 291։

[5] Նույն տեղում, էջ 291։

[6] ՄՄ, ձեռ. № 491, տե՛ս նաև՝ Լ. Մելիքսեթ-Բեկ. նշվ. աշխ., էջ 65։

տանքի և Ղզլարի բարեպաշտ ժողովրդի ջերմեռանդ օգնության շնորհիվ հաջողվել է ձեռք բերել Գ. Խուբովի չորս գործերի (1. Գավազանագիրք թագաւորացն Հայոց», 2-րդ՝ «Հեղինակ համեստութեան», 3-րդ՝ «Պարսաքար Դաւթի» և 4-րդ՝ «Հնագույն բառարան հայոց») տպագրության թույլտվությունը և հրամայում է տպագրել։ Գրում է նաև, որ կոմս Ռումյանցևը և մինիստր Շիշկովը առաջարկել են իրենց վաճառել այդ գրքերը, որոնք կթարգմանեն և կտպագրեն։ Սակայն Ղզլարի ջերմեռանդ ժողովուրդը, ավելացնում է արքեպիսկոպոսը, խնդրել է չվաճառել իրենց հիշատակը, խոստանալով նյութապես օգնել և գլուխ բերել տպագրության գործը։ Հավաքել և հանձնել են լույս ընծայելու փողը, միաժամանակ ցավում են, որ իրենք տպարան չունեն, թեպետ մեծ չափով զգում են դրա պահանջը[7]։ Վերը նշված վավերագիրը ուշագրավ է այն առումով, որ այստեղ առաջին անգամ հիշատակվում են Գ. Խուբովի երեք աշխատությունները (հայտնի էր միայն «Գավազանագիրքը»), որոնց ծանոթ չի եղել նաև Լ. Մելիքսեթ-Բեկը։ Այդ աշխատությունները, ցավոք, մինչ օրս չեն գտնված։ Փաստորեն, չի հաջողվել նաև դրանց տպագրման գործը։ Կասկածից վեր է, որ տպագրվելու դեպքում Խուբովի աշխատությունները որպես ուսուցողական ձեռնարկ օգտագործվելու էին Ղզլարի և այլ հայկական վարժարաններում։ Գ. Խուբովի մեզ հասած «Գավազանագիրք որ է ցուցակ ազգաբանութեան թագաւորացն նախարարաց և պայազատ սպարապետաց և այլոց» ձեռագիր աշխատությունը պատմաժամանակագրական բնույթի է, համեմված է պատմահայրենասիրական ոտանավորներով և գիտական ու գրական արժեք ունեցող նյութ է պարունակում[8]։ Աշխատությունը գրելու տարեթիվը և տեղը փոքր ինչ կասկածի տեղիք են տալիս։ Լ. Մելիքսեթ-Բեկը, մատնանշելով բուն տեքստի մեջ 1814 թ. ներքո մուծված հեղինակի հիշատակարանը, «Գավազանագրքի» վերջնական ձևակերպման ժամանակն է համարում հենց նույն՝ 1814 թ.[9]։ Եվ եթե ընդունենք, որ Գ. Խուբովը Ղզլար է փոխադրվել 1814 թ., ուրեմն աշխատությունը գրվել կամ ավարտվել է Ղզլարում հենց այդ թվականին։ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակում Մոզդոկի՝ որպես աշխատության գրչավայրի հիշատակումը սխալ է[10]։

Պահպանված վավերագրերից տեղեկանում ենք, որ Գ. Խուբովը Ղզլարի հայոց վարժարանում դասավանդել է մինչև 1828 թ.։ Աստրախանի հայոց կոնսիստորիան 1828 թ. սկզբներին ստացել էր Խուբովի զեկուցագիրը (հիշատակվում է ուսուցիչ առաջներորդ դասատան դպրոցիս) խնդրանքով՝ ազատել իրեն այդ պաշտոնից և փոխարենը նշանակել մեկ այլ ուսուցչի, որը կարողանա դասավանդել աշակերտներին նաև այլ անհրաժեշտ առարկաներ[11]։ 1828 թ. Գ. Խուբովի Աստրախան տեղափոխվելուց հետո Ղզլարի հայ համայնքի առջև կրկին հառնում է հայոց վարժարանում ուսուցիչ ունենալու խնդիրը։ Ղզլարահայ համայնքի՝ 1829 թ. Աստրախանի հայոց եկեղեցու ավագ սարկավագ Գևորգ Սուքիասովին տրված վկայականում նշվում էր, որ Գ. Սուքիասովը (վերը հիշատակված Արտեմ Սուքիասովի որդին) անձամբ խնդրել էր իրեն ուսուցիչ կարգել Ղզլարի վարժարանում։ Ղզլարահայերը համաձայնելով, միաժամանակ որդուն ոգևորում էին հոր օրինակով, մատնանշելով Արտեմ Սուքիասովի նախանձելի եռանդը մատաղ սերնդի կրթության կարևոր և դժվարին գործում[12]։ Աստրախանի հայոց կոնսիստորիան 1829 թ. սեպտեմբերի 13-ի որոշումով հաստատում է նրա թեկնածու-

7 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 56, վավ. 300։

8 ՄՄ, ձեռ. № 10189։

9 Լ. Մելիքսեթ-Բեկ. նշվ. աշխ., էջ 68։

10 Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի. հ. Բ, Երևան, 1970, էջ 1054։

11 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 88, վավ. 168։

12 Նույն տեղում։

թյունը, նշանակելով տարեկան 500 ռ. ռոճիկ և աշակերտների կողմից մուծվող վարձի կես մասը[13]։

Ղզլարում հայոց ուսումնարանի գոյատևության մասին պահպանվել են մի քանի տեղեկություններ, որոնց համաձայն դպրոցը շարունակել է գործել նաև 1818 թ., երբ բացվել է նաև Ղզլարի գավառական ուսումնարանը։ Մինչև 1836 թ. (գուցե և ավելի) Ղզլարի ուսումնարանում ուսուցչի պաշտոն է վարել Գ. Սուքիասովը։ Պահպանված մեկ այլ վավերագիր պատառիկից (Աստրախանի հայոց կոնսիստորիայի 1836 թ. մայիսի 1-ի որոշում-հրամանն է) երևում է այն համակ ուշադրությունը, որ հայոց առաջնորդարանը տածել է Ղզլարի ուսումնարանի նկատմամբ։

XIX դարի սկզբներին կրթական գործի հետ կապված դժվարությունները հայ հոգևոր և աշխարհիկ գործիչներին ստիպում էին դիմել նաև դպրոցական իշխանություններին՝ վերջիններիս իրավասության տակ գտնվող ուսումնարաններ հիմնելու նպատակով, որոնք գոնե նյութական ապահովության տեսակետից մշտապես կարող էին բավարարված լինել։ Ղզլարի հայ պատանիների համար ուսումնարան հիմնելու առաջարկով Եփրեմ կաթողիկոսը 1819 թ. դիմում է Կազանի համալսարանի պրոֆեսորի ընթերակա Մանասևին։ Վերջինս այդ մասին հայտնում է Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձու Մ. Մագնիցկուն, որը և շուտով Կազանի համալսարանի խորհրդից ձեռք է բերում ուսումնարանի բացման թույլտվությունը։ Մանասևը 1820 թ. ապրիլի 17-ի նամակով Եփրեմ կաթողիկոսին տեղեկացնում էր, որ ուսումնական հաստատությունների կանոնադրության համաձայն իրեն արդեն հաջողվել է ներկա տարվա մարտի 14-ին բացել Ղզլարի գավառական ուսումնարանը։ Ուսումնարանի հիմնադրման տարուց (1818 թ.), ավելացնում է ընթերական, շատերն արդեն հասու են դասավանդվող առարկաներին, իսկ ներկայում ուսումնարանն ունի 90 աշակերտ, որոնց մեծամասնությունը հայեր են[14]։ Նույն այս նամակից տեղեկանում ենք, որ Մանասևը մտադիր էր նույնատիպ ուսումնարան հիմնել նաև Մոզդոկում։ Միաժամանակ, նա կաթողիկոսին առաջարկում էր Ղզլարի և Մոզդոկի հայ հասարակությանը ներշնչել, որ նրանք ոչ միայն լիովին օգտվեն կառավարության ընձեռած շնորհից, այլ իրենք ևս օգնեն։ Եվ իրոք, տասնամյակներ շարունակ, Ղզլարի գավառական քաղաքային ուսումնարանը հանդիսացել է հայ համայնքի կրթական կարևոր օջախներից մեկը, որտեղ հարյուրավոր հայ պատանիներ (հիմնականում ունևոր խավերից) նախնական կրթություն են ստացել։ Կովկասյան մարզի ուսումնարանների դիրեկտորի 1840 թ. հունիսի հաշվետվության մեջ նշվում էր, որ Ղզլարի գավառական ուսումնարանի 4 դասարաններում սովորում էին 70 աշակերտներ, որոնք մեծ մասամբ հայ ազնվականների և վաճառականների երեխաներ էին[15]։ 1860-ական թթ. ուսումնարանում կրթություն էին ստանում 100-ից ավել աշակերտներ, որոնցից 2/3-ը քաղաքի հայերի, թաթարների ու վրացիների երեխաներն էին և միայն 1/3-ը՝ «սլոբոդկայի» ռուսների[16]։

Ղզլարահայ հասարակությունը բազմապիսի օգնություն է ցույց տվել ուսումնարանին։ Բազմիցս ուսումնարանի հոգաբարձուի պաշտոնում ընտրվել են հայ համայնքի վերնաշերտին պատկանող ոչ միայն ուսյալ, այլև ունևոր անձինք, որոնք և զգալի միջոցներ են ներդրել աշակերտների և ուսուցիչների նյութական ապահովման, վարժատան կառուցման և վերանորոգման, գրականության, գրենական պիտույքների հայթայթման և այլ գործերում։ Ուսումնարանի մշտական և անխափան աշխատանքը ապահովելու նպատակով 1820 թ. Ղզլարի հայկական, վրացական և թաթարական համայնքները (ուսումնական հաստատությունների վերաբերյալ կանոնադրու-

13 Նույն տեղում։

14 Նույն տեղում, թղթ. 36, վավ. 89։

15 ГАКК, ф. 427, оп. 1, д. 201, л. 5.

16 «Кавказ». 1864. № 95.

թյան համաձայն) որոշում են ընդունում քաղաքային եկամուտներից ուսումնարանին հատկացնել տարեկան 500 ռ., այդ գումարի ստացման և հանձնման հսկողությունը հանձնելով Ղզլարի հայկական դատարանին[17]։ Նկատի ունենալով, որ դպրոցը գտնվում է քաղաքից դուրս և քաղաքից կտրված է, ղզլարահայ մեծահարուստ Գասպար Մամաջանյանը 1860-ական թթ. սկզբներին խոստանում է դպրոցը փոխադրել քաղաք և սեփական գումարով տուն վարձել դպրոցի համար։ Սակայն ինչ-ինչ պատճառներով դա չի իրագործվել[18]։ Ղզլարի գավառական դպրոցի վերատեսուչ Դ. Բոգդանովիչի 1867 թ. կաթողիկոսին հղած զեկուցագրից տեղեկանում ենք, որ դպրոցը տեղավորված էր պետական շենքում, ուներ 138 աշակերտ (ըստ ազգությունների չի նշվում), իսկ ուսուցիչների թվում էին՝ հայոց կրոնուսույց 1 ուսուցիչ և 1 հայոց լեզվի ուսուցիչ։ Դպրոցը ունեցել է հարուստ գրադարան, բաղկացած 878 գրքից[19]։ 1825 թ., Լազարյանների հոգացողությամբ, ղզլարահայերի խնդրանքով և դպրոցական իշխանությունների թույլտվությամբ Ղզլարի գավառական ուսումնարանում, հայոց լեզվի ուսուցչի, իսկ 1826 թ. ուսումնական մասի հոգաբարձուի պաշտոնով աշխատանքի է անցել Լազարյան ճեմարանի շրջանավարտ Պողոս Ասլանովը[20]։ Կովկասյան ուսումնարանների դիրեկցիայի ներկայացրած ծառայողական ցուցակի համաձայն Պ. Ասլանովը լիարժեք տիրապետել է ռուսերեն և հայերեն լեզուներին, թարգմանություններ է կատարել լատիներենից, ֆրանսերենից և գերմաներենից[21]։

Հետագայում Ղզլարի գավառական ուսումնարանում հայոց լեզվի և կրոնի դասավանդումը դադարեցվել է (նույնը կատարվել է նաև Մոզդոկի գավառական ուսումնարանում)։ Եվ միայն 1848 թ. կայսերական կարգադրությունից հետո Կովկասյան ուսումնարանների հոգաբարձությունը Ներսես կաթողիկոսին տեղեկացրել է, որ «...սահմանեցեալ է զի յայնոսիկ նահանգս կամ ուեզդս յորս գտանին յազգէ հայոց արտաքոյ հասարակական նպատակայն եղիցի և ըստ լեզուի հայոց ուսումն»։ Աստրախանի վիճակավոր Բարսեղ արքեպիսկոպոսին ուղղված կաթողիկոսի 1850 թ. հայտարարության մեջ նշվում էր, որ կարգադրության համաձայն պետք է ընտրել հայ հոգևորականներից արժանավորներին և հայոց լեզվի ու կրոնի ուսուցիչ կարգել ինչպես Ղզլարի, այնպես էլ Մոզդոկի գավառական ուսումնարաններում[22]։ Դարավերջին, երբ Ղզլարում ձախողվեց ռեալական ուսումնարանի հիմնադրումը, որն ունենալու էր այգեգործության և գինեգործության բաժիններ, փորձ արվեց նման կուրսեր բացել քաղաքային ուսումնարանին կից։ Թերեքի մարզի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորը 1889 թ. Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձուին հայտնում է, որ Ղզլարի քաղաքային ուսումնարանի տնօրենն իրեն տեղեկացրել է, որ ղզլարահայ Ս. Վարդանովը զգալի գումար է նվիրաբերել ուսումնարանում շերամապահական կուրսեր բանալու նպատակով։ Նա գործին մասնակից է դարձրել հմուտ մետաքսագործ Առուստամովին, որն էլ խոստացել է ուսումնարանին օգնել իր ցուցմունքներով և խորհուրդներով, որպիսիք անհրաժեշտ կլինեն մետաքսի որդի աճեցման և մշակման դժվարին գործում[23]։ Ղզլարահայերի արդյունագործությանը բնորոշ նման մասնագիտական կուրսերի և համապատասխան գիտելիքների ձեռքբերման անհրաժեշտությունը Ղզլարում վաղուց էր զգացվում։ Դարավերջին այդ հարցը հասունացել և լուծման կարիք ուներ, ուստի պատահական չէ, որ գործին կրկին մասնակից էին դառնում

17 ГАСК, ф. 79, оп. 1, д. 278, л. 1.

18 «Кавказ», 1864, № 95.

19 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 206, վավ. 1961։

20 Տե՛ս Собрание актов. Т. III, М., 1838, с. 14.

21 ГАКК, ф. 427, оп. 1, д. 101, л. 2об.—3.

22 ՄՄ, արխիվ Ա. Երիցյանի, թղթ. 154, վավ. 169։

23 Վրացական ԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 3580, թ. 1։

ղղլարահայերը, համեմատաբար ուշ, բայց ճիշտ պատկերացնելով մասնագիտական գիտելիքների, դրանք տնտեսական կյանքի բարելավմանն ուղղելու անհրաժեշտությունն ու հրատապությունը։

Ղզլարի հայ համայնքի կրթական կյանքում նշանակալի երևույթ էր ճեմարանավարտ Հակոբ և Դավիթ Արզանով եղբայրների կողմից մասնավոր պանսիոնի հիմնադրումը։ Այդ գործի հետ կապված մանրամասների քննությունը ուշագրավ է այն առումով, որ պատկերացում է տալիս ղղլարահայ հասարակական կյանքում տեղ գտած որոշ հակասական երևույթների և այն մտայնության մասին, որ առավել բնորոշ էր XIX դարի առաջին կեսի հյուսիսկովկասյան հայ գաղթավայրերին։ Մասնավոր ուսումնարանի բացման նախաձեռնողները ղղլարահայերն էին, որոնք զգալով լեզուների իմացության և գիտության անհրաժեշտությունը լուսավորյալ Եվրոպայի պայմաններում և ցանկանալով Ղզլարում ունենալ ուսումնական հաստատություն, դիմել էին Լազարյան ճեմարանի շրջանավարտ Արզանով եղբայրներին և ստացել էին նրանց համաձայնությունը[24]։ 1827—1828 թթ. ժամանակահատվածում Կովկասյան մարզի պետին հղած մի շարք խնդրագրերում ղղլարահայերը տեղեկացնում են կողմերի նախնական պայմանավորվածության և համաձայնության մասին, խոստանալով վճարել աշակերտների ուսման տարեկան վարձը, ուսումնարանի համար պատրաստել հարմարավետ շենք և այն ապահովել համայնքի միջոցներով[25]։ Միաժամանակ ղղլարահայերը խնդրում էին մարզի պետի միջնորդությունը Խարկովի կայսերական համալսարանի ղեկավարության առջև՝ մասնավոր պանսիոնի բացման թույլտվությունը շուտափույթ ստանալու համար[26]։ 1828 թ. հունիսի 7-ին ղղլարահայերը նույնատիպ խնդրագիր են հղում նաև Խարկովի կայսերական համալսարանին։ Արզանով եղբայրները 1828 թ. օգոստոսին արդեն ժամանել էին Ղզլար և ձեռնարկել էին պանսիոնի բացման աշխատանքները։

Կովկասյան ուսումնարանների դիրեկտոր Ե. Գրուբերը 1829 թ. հունիսին Կովկասյան մարզի պետին հայտնում է, որ Ղզլարում մասնավոր պանսիոնի բացման թույլտվություն ստանալու նպատակով ինքը մի քանի անգամ արդեն դիմել է Խարկովի համալսարանի կոմիտեին, մանրամասն բացատրելով պանսիոնի բացման օգտակարությունը ոչ միայն Ղզլարի, այլև ամբողջ Կովկասյան մարզի համար և հույս ունի, որ հարցը շուտով դրականորեն է լուծվելու[27]։ Ի վերջո, իշխանությունների թույլտվությամբ, 1829 թ. աշնանը Ղզլարի մասնավոր արական պանսիոնը բացվում է։ Փաստագրերը հավաստում են, որ Արզանով եղբայրները եռանդ ու միջոց չեն խնայել հայրենակիցներին օգտակար լինելու համար, արժանացել են քանիցս նրանց պանսիոնը այցելած մարզի պետի, Կովկասյան ուսումնարանների դիրեկտորի և Դորպատի համալսարանի պրոֆեսոր Պարրոտի գովասանքներին։ Ցավոք, պանսիոնի գոյությունը կարճատև է եղել։ Չորսամյա դասընթացը դեռ չավարտած, երրորդ տարում՝ 1831 թ. աշնանը արական ուսումնարանը փակվել է, իսկ Արզանով եղբայրները, սկզբում կրտսերը՝ Դավիթը, ապա ավագը՝ Հակոբը մեկնել են Թիֆլիս, տեղի սեմինարիայում աշխատանքի անցնելու նպատակով[28]։ Ղզլարահայերը, այդ թվում Մոզդոկի քաղաքային ուսումնարանի հոգաբարձու Երուսալիմսկին, Ղզլարի գավառական ուսումնարանի հոգաբարձու Խոջաևը և ուրիշներ, Խարկովի համալսարանի ուսումնական կոմիտեին հղած 1832 թ. բողոքագրերում նշում էին, որ պանսիոնը փակվել է ինքնակամ, առանց որևէ պատճառի, ուսումնարանում տեղ գտած թերությունների համար մեղադրում էին Արզանով եղբայրներին, պահանջելով վերադարձնել ուսումնառության համար ուղարկված գումարը, քանի որ այն կի-

---

24 ГАСК, ф. 79, оп. 1, д. 604, л. 1.

25 Նույն տեղում, գ. 340, թ. 3։

26 Նույն տեղում, գ. 604, թ. 1 հակ.։

27 Նույն տեղում, թ. 5։

28 ГАКК, ф. 427, оп. 1, д. 136, л. 10.

սատ. է մնացել[29]։ Խոջաևը գրում էր, որ 1831 թ. նոյեմբերի 1-ին, Ղղլարի վրա չեչենների հանկարծահաս հարձակումից հետո, Արզանով եղբայրները դադարեցրել են ուսումնատվությունը, այդ մասին նախօրոք չհայտնելով ոչ միայն դպրոցական իշխանություններին, այլև աշակերտների ծնողներին[30]։ Իրավանությանը մոտ և առավել համոզեցուցիչ էին Արզանով եղբայրների ներկայացրած փաստարկները։ Խարկովի համալսարանի կոմիտեին և Կովկասյան ուսումնարանների դիրեկտորին հղած 1832 թ. խնդրագրերում նրանց մատնանշում էին մի շարք աննախադեպ հանգամանքներ, որոնք և պանսիոնի փակման պատճառ դարձան։ Խոլերայի համաճարակի, ապա և չեչենցիների հարձակման հետևանքով քաղաքում ստեղծված անհանգիստ իրավիճակի պայմաններում, գրում էին Արզանով եղբայրները, ծնողներից շատերը խուսափում էին երեխաներին ուսումնարան ուղարկել։ Տեսնելով, որ ոչ միայն չեն թույլատրում դպրոց հաճախել, այլև առանց մեր գիտության ուղարկում են այլոց մոտ մասնավոր պարապմունքների, գրում է եղբայրների կրտսերը, պահանջեցինք նախորդ տարիների համար չմուծված ուսման վարձ, որից, սակայն, ղղլարցիները հրաժարվեցին, պատճառաբանելով, որ իբր երեխաները հիվանդության պատճառով երկար ժամանակ դպրոց չեն հաճախել և այլն[31]։ Արզանով եղբայրների խնդրագրերում բերված մյուս փաստարկները՝ ուսման վարձի ոչ ժամանակին մուծումը կամ ձգձգումը, դպրոցը ապահովելու ղղլարահայերի խոստումների ոչ միշտ կատարումը և նրանց անհարկի միջամտությունները ուսման ընթացքին, հիրավի, խոսում էին ոչ ղղլարահայերի օգտին։ Նրանց ժամանակավոր ոգևորությունը տեղի էր տվել անտարբերության։ Վճռական պահին ղղլարահայ մեծահարուստները սատար չեղան Արզանով եղբայրներին, և դա այն դեպքում, երբ պանսիոնից փաստորեն օգտվում էին միայն ունևոր ղղլարահայերը, յուրաքանչյուր աշակերտի համար վճարելով տարեկան 400 ռուբլի։ Իրողությունն այն է, որ նման վերաբերմունքից վիրավորված Արզանով եղբայրները հրաժարվեցին ուսուցումը հետագայում շարունակելու մտքից և հեռացան քաղաքից։

1836 թ. մարտի 11-ի «Կանոնադրության» համաձայն և հաշվի առնելով նաև Աստրախանի թեմակալի դրական վերաբերմունքը, Էջմիածնի սինոդը 1837 թ. հունիսի 2-ի նիստում թեմակալին կարգադրում է Ղղլարում բացել օխական դպրոց, որտեղ սովորելու էին Ղղլարի և շրջակա վայրերի հայ հոգևորականների երեխաները։ Աստրախանի առաջնորդի պաշտոնակատար Բարսեղ արքեպիսկոպոսի բացատրականից տեղեկանում ենք, որ Ղղլարի հոգևոր ծխական ուսումնարանը բացվել է 1840 թ., «...յորում կարգեցեալ վարժապետք երկուց լեզուաց հայոց և ռուսաց և վերակացու նորին...»[32]։ Սակայն դպրոցը նյութական միջոցների սղության պատճառով մի քանի անգամ փակվել է։ Էջմիածնի սինոդը նախապես հաստատել և պատվիրել էր կոնսիստորիային հոգևոր դպրոցների (Աստրախանի սեմինարիայի և Ղղլարի հոգևոր դպրոցի) պահպանության միջոցները ստանալ «...յարդեանց եկեղեցեայց վիճակիս Աստրախանու և Կովկասու», յուրաքանչյուրի համար սահմանելով համապատասխան գումար, սակայն 1848 թ. կոնսիստորիան նկատելով, որ վիճակի եկեղեցիները չեն վճարում, ավելի ճիշտ ի վիճակի չեն տալ սահմանված դրամը և «սակաւամուտք դրամոյն ոչ կտրէին ծածկել զծախս նոցին», որոշում է ընդունում դպրոցները փակելու վերաբերյալ[33]։ Վավերագրերի վկայությամբ, Ղղլարի ծխական ուսումնարանը հաստատուն հիմքերի վրա է դրվել միայն դարի 60-ական թթ., մինչ այդ մի քանի անգամ փակվելով և վերաբացվելով։ Թերևս բարդություններից մեկը ուսումնարանի

29 Նույն տեղում, թ. 1—10։
30 Նույն տեղում։
31 Նույն տեղում, թ. 46—47։
32 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 162, վավ. 306։
33 ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 1279, թ. 15։

շինության հարցն էր։ 1847 թ. ղզլարահայերը, ապա և տեղի եկեղեցու երեցփոխ Գ. Խոջաևը կաթողիկոսին գրում են, որ տեղեկացել են Ղզլարում կառուցվելիք «...զմեծ ու վայելուչ շինուածոյ ուսումնարանի» մասին, և ոգևորված դրանից, նրանք գնել և ձրիաբար էջմիածին են առաքել 50 հատ ընտիր ուղտ[34]։ Հետագայում ևս Ղզլարի դպրոցը գոյատևել է մասնավոր անձանց օժանդակությամբ և միջոցներով, որոնք կառուցել են դպրոցական շինությունը, հոգացել են ուսումնարանի ծախքերը, ոչ միայն ուսուցիչներ են հրավիրել Ղզլար, այլև սեփական ծախքով որդեգիր պատանիներ են ուղարկել Ներսիսյան դպրոց և Լազարյան ճեմարան՝ ապագայում սեփական կադրեր ունենալու նպատակով։ 1852 թ. մայիսին Ներսես կաթողիկոսը Ներսիսյան դպրոցի հոգաբարձությանը հայտնում է, որ Ղզլարի երկրորդ կարգի վաճառական Պ. Սամվելյանը Թիֆլիսի բանկ է ուղարկել 1500 ռ. գումար, որի տոկոսներով «...մինն ի յորդւոց քահանայից ղզլարայ ունիցի ուսանել ի մերում ուսումնարանի»։ Տեղեկացնում է նաև, որ ղզլարահայերը «առաքեալ են վասն ուսանելոյ ի նմին ուսումնարանի ի կարգի որդեգրաց և զորդի տեր Մկրտիչ քահանայ Պոպովյանց Սահակ 16 ամաց» և հոգաբարձությանը պատվիրում է ընդունել նրանց «...ի թիւս աշակերտաց պենսիոնի»[35]։ 1856 թ. Ներսիսյան դպրոցն ավարտած Մ. Պոպովյանցն ու Մ. Սահակյանցը նամակով դիմում են Ղզլարի հայոց եկեղեցիների կարգապահ Ստ. քահանա Ֆիլյանցին՝ Ղզլարի ծխական դպրոցում ուսուցչի պաշտոն ստանձնելու կապակցությամբ։ Վերջինս, ոգևորված շրջանավարտների ազգօգուտ առաջարկից, հայտարարությամբ դիմում է կաթողիկոսին և խնդրում հնարավորության դեպքում նրանց ուսուցիչ կարգել Ղզլարի դպրոցում։ Ստ. Ֆիլյանցը առաջարկում է դպրոցում ունենալ նաև «...յորդւոց աշխարհականաց, ոչ ավելի քան զ25 վարձաւոր աշակերտս», որոնցից՝ 5 աշակերտների վարձը կօգտագործվի դպրատան կարևոր ծախսերը հոգալու համար, իսկ մյուս 20 աշակերտների վարձը կբավականացնի ուսուցիչներին[36]։ Փաստորեն, հոգևորականների երեխաներից բացի Ղզլարի ծխական դպրոց կարող էին ընդունվել նաև աշխարհականների երեխաները։ Ղզլարահայերը 1857 թ. համախոսականում հայտնելով Մ. Սահակյանցին տեղի դպրոցում ուսուցիչ կարգելու իրենց ցանկության մասին, ավելացնում էին, որ «...առավել ևս նա է պիտոյ վարժապետութեան, որոյ ունիմք մեկ կարոտութիւն վասն մանկանց թե հոգևորականաց և թե աշխարհականաց»[37]։ Աստրախանի վիճակի առաջնորդի հայտարարություններից մեկում (1860 թ.) նույնպես հիշատակվում էր, որ Ղզլարում խիստ սակավ էին հոգևորականների որդիները, իսկ փոխարենը «...մանկունք աշխարհական անձանց» մեծամասնություն էին կազմում ուսումնարանում[38]։

Դպրատան հարցը, ինչպես նշեցինք վերևում, կրթական գործի կազմակերպման ընագավառում թերևս ամենակարևոր հարցերից էր։ 1840-ական թթ. վերջերին խոստացված դպրատունը թեև պատրաստվել էր Ս. Աստվածածնա եկեղեցու գավթում, բայց այդպես էլ փակ էր մնացել՝ միջոցներ չինելու պատճառով։ Այդ մասին էր հիշատակում Ղզլարի հայոց եկեղեցիների կարգապահ Ֆիլյանցը կաթողիկոսին (1856 թ.), նշելով, որ եթե անհնար է դպրոցը պահել եկեղեցու արդյունքներով, ապա «...պարտաւորիմք զայն մեք հոգալ, եթէ գուցէ յաշխարհականաց գտանիցեն նուիրատուք և այլ վասն մանրամաս ծախուց դպրատանն»[39]։ Այդպիսի առաջարկությամբ 1859 թ. թեմի առաջնորդին է դիմում Ղզլարի Ս. Լուսավորիչ եկեղեցու երեցփոխ Գ. Բայենդուրովը, հայտնելով, որ նախապես մտադիր էր եկեղեցու բակում մի

---

34 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 129, վավ. 137, թղթ. 136, վավ. 577։
35 ՄՄ, արխիվ Ալ. Երիցյանի, թղթ. 148, վավ. 289։
36 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 181, վավ. 19 I, 12 II։
37 ՀԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 1272, թ. 16։
38 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 190, վավ. 36։
39 Նույն տեղում, թղթ. 181, վավ. 19 II։

քանի սենյակ պատրաստել աղքատանոցի համար, իսկ այժմ որոշել է պատրաստվելիք սենյակները տրամադրել ծխական ուսումնարանին և խնդրում է թույլատրել ձեռնարկել դրանց շինությունը։ Պատասխան նամակում առաջնորդը գրում էր, որ գերադասելի է ուսումնարանի համար 8 սենյակների կառուցումը, ուստի թույլատրում և հորդորում էր առաջիկա գարնանը ձեռնամուխ լինել այդ ազգօգուտ շինությանը[40]։ Մաթևոս կաթողիկոսը 1860 թ. ապրիլի 1-ի կոնդակով թույլատրում էր Ղզլար քաղաքում բացել առանձին ծխական ուսումնարան, հոգաբարձությամբ ղզլարահայ ազնվական, փոխգնդապետ Հ. Քանանյանցի, որը խոստացել էր սեփական ծախքով, «նոյնպես և այլոց բարեպաշտից օժանդակութեամբ և գործակցութեամբ» ապահովել դպրոցը։ Ղզլարահայերի և հոգաբարձության խնդրանքով դպրոցում ուսուցիչ էին կարգվելու վերը հիշատակված Ս. Պոպովյանցն ու Մ. Սահակյանցը[41]։ Այդուհանդերձ, մեզ անհայտ պատճառներով Ղզլարում ծխական դպրոցի բացումը ձգձգվել է ևս մեկ տասնամյակ։ Դպրոց չլինելու պատճառով ղզլարահայերն իրենց մանուկներին ուղարկել են մասնավոր վարժատները։ Վավերագրերից մեկում (1868 թ.) հիշատակվում են Հովհ. Քուչուբեկյանցի, Խ. Աստվածատրյանցի, Հ. Խամալյանցի և Ս. Ղորղանյանցի «մասնաւոր կրթարանք», որոնցում հայոց և ռուսաց լեզու են ուսանել ղզլարահայ 85 մանուկներ[42]։ Աշակերտների ուսուցումը հաստատուն հիմքերի վրա դնելու նպատակով 1868 թ. մայիսին հետևում է Աստրախանի կոնսիստորիայի հրամանը՝ մինչև ծխական դպրոցի շենքի կառուցումն աշակերտներին ժողովել և զետեղել հարմարավետ բնակարանում։ Ընտրել 2 հոգաբարձու, ուսուցիչների տարեկան վարձը նշանակել 3 եկեղեցիների արդյունքներից։ Հրամանով նախատեսվում էր I և II դասարաններում ուսուցիչներ նշանակել Հովհ. Քուչուբեկյանցին և Ս. Ղորղանյանցին, «իսկ III դասատան պարապեսցի իբրև կրոնուսուց և դասասաց քերականական արհեստից ինքն նախանդամ Ադամ վարդապետ տէր Նիկողոսեանց»[43]։ Նույն թվականին, ի պատասխան կաթողիկոսի կոնդակի, հետևում է Մ. Մամաջանյանի և Ղզլարի հայ հասարակության գրությունը կաթողիկոսին այն մասին, որ արդեն ընտրվել են 5 գործունյա և հմուտ հոգաբարձուներ, որոնք պարտավոր են նվիրատվություններ հավաքել և ձեռնարկել ուսումնարանի տան շինությունը եկեղեցու գավթում[44]։

1870 թ. օգոստոսին Ղզլարի հայոց հոգևոր վարչությունը հայտնում է կոնսիստորիային, որ ազգային ուսումնարանի շինության օգտին հանգանակություն անելու նպատակով թեմական կողմից 1868 թ. հոգաբարձուներ կարգված Ստ. Ֆիլյանցն ու Խ. Աստվածատրյանցը մի քանի տարվա ընթացքում նկատելի գումար են ժողովել և արժանի են պարգևատրման «ի հորդոր և ի խրախոյս այլոց յանձնանվէր ծառայութեան և ի յավետ առաջադիմութեան ազգաշահ և ի վսեմ գործս»[45]։ Ի վերջո, 1871 թ. մայիսի 30-ին, հանդիսավոր պայմաններում բացվում է Ս. Լուսավորիչ եկեղեցու բակում կառուցված, քարաշեն հայոց ուսումնարանը, որի հիմքը դեռևս 1867 թ. օրհնել էր Ղզլար այցելած Գևորգ կաթողիկոսը։ Ղզլարի հայ հասարակությունը զանազան առիթներով և տարբեր ժամանակներում դպրոցի կառուցմանը նվիրել էր նշանակալի գումար՝ շուրջ 9000 ռուբլի[46]։ Շուտով այստեղ են փոխադրվում 1868 թ. դասընթացը սկսած ծխական դպրոցի սաները։ Ղզլարի հայոց հոգևոր դպրոցի հոգաբարձության (հիշատակվում են՝ հոգաբարձու և տեսուչ, բժիշկ Անանիա Սուլթան-Շահը, տեսուչի օգնական Ա. Կաճկաճյանը, Հովհ. Քուչուբեկյանցը, Մ. Քալանթարյանցը) 1871 թ. ուսումնական

---

40 Նույն տեղում, թղթ. 189, վավ. 101։
41 Նույն տեղում, թղթ. 190, վավ. 3։
42 Նույն տեղում, թղթ. 206, վավ. 2094։
43 Նույն տեղում։
44 Նույն տեղում, թղթ. 206, վավ. 2060։
45 ՀԵՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 821, թ. 9—10։
46 «Արարատ», 1871, № 3, էջ 185—186։

մասի հաշվետվությունից տեղեկանում ենք, որ ընթացիկ տարվա սկզբին դպրոցն ունեցել է 173 աշակերտ, որից 13-ը հոգևոր, 90՝ թոշակառու, 70՝ ձրիավարժ։ Առանց ուսումն ավարտելու դուրս էին մնացել 25 աշակերտ, իսկ տարվա վերջին դպրոցն ուներ 148 աշակերտ[47]։ Ուսումնարանն ուներ 3 դասարան և մի նախակրթական բաժին, որոնց սպասարկում էին 5 ուսուցիչներ և մի վերակացու։ Նախապատրաստական բաժնում կամ դասարանում ուսուցանում էին հայոց և ռուսաց լեզվի ընթերցանություն (ըստ նկատողական ձևոյն)։ Առաջին դասարանում ուսանում էին կրոնից՝ սկզբնական գիտելիք հավատո, հայոց լեզվից՝ քերականության առաջին մասը և թարգմանություն ավետարանի (գրաբարից աշխարհաբար), ռուսաց լեզու՝ գրել և կարդալ, թվաբանություն մինչև կոտորակը, ռուսերեն և հայերեն վայելչագրություն։ Երկրորդ դասարանում վերը նշված առարկաներին ավելանում էին աշխարհագրությունը, ընդհանուր պատմությունը, ազգային պատմության ընդարձակ դասընթացը։ Հաշվի առնելով ուսման հանդեպ աշակերտների ձգտումը, հոգաբարձությունը տարվա կեսերին բացում է նաև III դասարանը, որտեղ առարկաները համեմատաբար բարդացվում են և ավելանում է եկեղեցական երգեցողությունը։ Բացի այդ, դպրոցի աշակերտներից կազմվել էր 2 խումբ՝ եկեղեցական երգեցողության համար։ Ուսուցիչներ էին վարձվել Գ. Տեր-Իշխանյանցը և Ս. Ղորգանյանցը՝ եկեղեցիների համար երգչախումբ պատրաստելու նպատակով[48]։ Տարիներ շարունակ դպրոցի պահպանության աղբյուրներն էին քաղաքի 3 եկեղեցիների դրամագլխի տոկոսները, թոշակառու աշակերտների վարձը և ժողովրդի նվիրատվությունները։ 1870-ական թթ. սկզբներին Ղզլարի ազգային հոգևոր դպրոցը հիմնել էր նաև աշակերտական և հիմնական մատենադարաններ (գրադարաններ), որոնցում պահվում էին զանազան բովանդակության 821 գրքեր, այդ թվում աստվածաբանական գրքեր՝ 47 հատ, պատմական՝ 49, բանասիրական 33, ուսումնական՝ 12, մանկավարժական՝ 21, աշխարհագրական՝ 4, թվաբանական՝ 5, երաժշտական՝ 4, բառգիրք մեծ՝ 4, դասականների աշխատություններ, հայերեն և ռուսերեն զանազան լրագրեր, ամսագրեր և այլն[49]։ Ուշագրավն այն է, որ հոգևոր դպրոցի գրադարաններում գերիշխել է աշխարհիկ գրականությունը։ Սա, թերևս, բացատրվում էր ազգային դպրոցի թե՛ նպատակով և թե՛ կրթության ուղղությամբ ու բովանդակությամբ։ Մատենադարանի հիմնադրմանը դրամական նվիրատվություններով կամ գրքեր նվիրելով զգալի օգնություն են ցույց տվել ղզլարահայ մեծահարուստներից շատերը՝ դպրոցի նախկին հոգաբարձու Մ. Մամաջանյանը, Ս. Իզմիրյանը և ուրիշներ։ Գրադարաններին գրականություն է ուղարկվել նաև Լազարյան ճեմարանի ուսուցիչ Սմբատ Շահազիզից, Թիֆլիսի գրքավաճառ Վարդանյանից, Հովհ. Սահրադյանից (Աստրախան) և այլն։

XIX դարի 70-ական թթ. կեսերին Ղզլարի հոգևոր ուսումնարանը բավական բարգավաճել էր և ընդարձակել իր ուսումնատվության շրջանակները։ Հոգաբարձության վկայությամբ այնտեղ «...աւանդին լեզուք և առարկայք ըստ կանոնի թեմական դպրոցաց ընդարձակ դասախոսութեամբ»[50]։ Ղզլարի հոգևոր դպրոցի հոգաբարձուները կաթողիկոս Գևորգ IV-ին ուղղված 1874 թ. հոկտեմբերի խնդրագրում մատնանշում էին, որ վիճակում տակավին չկա թեմական դպրոց, որն ի վիճակի լիներ բավարարել ժողովրդի ուսումնական կարիքները։ Ղզլարի դպրոցը, ավելացնում էին նրանք, ինչպես և դա երևում է դպրոցի կանոնադրությունից, կրթության մատակարարման տեսակետից հասել է թեմականին և խնդրում էին կաթողիկոսի

---

47 Նույն տեղում, 1872, էջ 168—169։ Տե՛ս նաև՝ ЦГА СОАССР, ф. 12, оп. 1. д. 194, л. 4.

48 Տե՛ս ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 225, վավ. 22։

49 «Արարատ», 1872, № 3, էջ 128—131։

50 ՄՄ, կաթ. դիվան, թղթ. 225, վավ. 22։

հրամանը՝ «վերածել զդպրոցն լաստիճան թեմականի»[51]։ «Ղզլարահայերի կարծիքով, ունենալով այդ արտոնությունը, դպրոցն առավել ևս կծաղկեր և պտղաբեր կլիներ իրենց թեմի համար, որտեղ կսովորեին նաև այլ քաղաքների ծխական դպրոցների աշակերտները, իսկ ավարտելուց հետո կամ կանցնեին հոգևոր կոչման կամ էլ ուսումը կշարունակեին էջմիածնի նորաբաց ճեմարանում։ Պատասխան գրությունում (1874 թ. հուլիս) կաթողիկոսն արժանի և պատշաճ համարելով ղզլարահայերի խնդրանքը, նշում էր, թե ինքը հուսով է, որ այն կկատարվի հաջողությամբ և վիճակավոր դպրոցն օգտակար կլինի ոչ միայն մանուկների կրթությանը, այլև բարեկրթության աղբյուր կդառնա ողջ թեմի համար[52]։ Աղբյուրներից մեկում թեև տեղեկություն կա այն մասին, որ Ղզլարի ծխական ուսումնարանը կաթողիկոսի հրամանով փոխարկվել էր թեմական դպրոցի, սակայն ղզլարահայերի ցանկությունն իրականում չի իրագործվել։ Թեմական դպրոցի (հոգևոր սեմինարիայի) բացման հարցն արծարծվել է հետագայում ևս և միշտ նույն տարակուսանքն է ծագել՝ Աստրախանի թեմի ո՞ր քաղաքին նախապատվություն տալ՝ Աստրախանի՞ն, որ առաջնորդանիստ էր և հարուստ, թե՞ Ղզլարի՞ն, որն ավելի բազմամարդ էր և որի դպրոցը կարող էր ավելի առաջադիմել։ Առաջարկվել է անգամ Մոզդոկի թեկնածությունը։ Դարավերջին քննարկվել է նաև թեմական դպրոցը Արմավիրում բացելու հարցը, պատճառաբանությամբ, որ այն խոշոր առևտրական կենտրոն էր, գտնվում էր Հյուսիսային Կովկասի հայաբնակ քաղաքների կենտրոնում և ի վիճակի էր նյութապես ապահովել դպրոցը։ Պատահական չէ, որ 1895 թ. Աստրախանում կայացած Հյուսիսային Կովկասի հայաբնակ քաղաքների ներկայացուցիչների խորհրդակցությունում քվեարկության ժամանակ Արմավիրը ստացավ 9 ձայն, Աստրախանը՝ 8, իսկ Մոզդոկը՝ ընդամենը 3։ Կամենալով վերջ տալ հարցի հետագա խճճմանը, մոզդոկցիներն իրենց ձայնը տալիս են աստրախանցիներին և հարցը, փաստորեն, վճռում հօգուտ Աստրախանի[53]։

Դպրոցի (վավերագրերի մի մասում սխալմամբ հիշատակվում է «Թեմական արական հոգևոր դպրոց հայոց Ղզլարայ») մուտքի և ելքի հաշվեմատյաններից (1878 թ.) տեղեկանում ենք, որ ուսումնարանի մուտքի գումարները հիմնականում գոյանում էին եկեղեցական հասույթներից։

Միայն 1878 թ. Ղզլարի հայկական եկեղեցիներն արական դպրոցի պահպանության համար հատկացրել էին 1587 ռ., չհաշված եկեղեցական տոների և ծեսերի ժամանակ հավաքված զանազան գանձանակադրամները[54]։ Նկատելի գումար էր կուտակվում ղզլարահայ (և ոչ միայն ղզլարցի) մեծահարուստների զանազան առիթներով դպրոցին ընծայած նվիրադրամներից, որոնք տոկոսաբեր դրամատոմսակների ձևով գտնվում էին Ղզլարի Մամաջանյան հասարակական բանկում և այլ պետական ու մասնավոր բանկային հաստատություններում[55]։ Մուտքի գումարները գոյանում էին նաև աշակերտների ուսման վարձից (հաշվետվությունից պարզվում է, որ մեկ աշակերտի համար տարեկան վարձը 8 ռուբլի էր), տարբեր գրքերի վաճառքից և այլն։ Ծախսերի մեջ մտնում էին ուսուցիչների վարձատրումը, դպրոցի պահպանի վարձը, զանազան պարբերականների բաժանորդագրման ծախսերը և այլն[56]։

1850-ական թթ. կեսերից ղզլարահայերի շրջանում հետզհետե իմաստավորվում և կյանքի է կոչվում հայ օրիորդների ուսման կարևորությունը։ Աղբյուրներից տեղեկանում ենք, որ 1856 թ. ուսումնավարտ մի ռուս կին Ղզլարում մասնավոր պանսիոն էր բացել, որտեղ մեծ մասամբ հայ օրիորդ-

51 Նույն տեղում։
52 Նույն տեղում։
53 «Նոր դար», 1894, № 52, էջ 2—3։ «Մշակ», 1895, № 68, էջ 3։
54 ՀԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 52, ց. 1, գ. 2799, թ. 5 հակ., գ. 2356, թ. 78։
55 Նույն տեղում, գ. 2799, թ. 5։
56 Նույն տեղում, թ. 7։

ներ էին ուսանում՝ բավականաչափ առաջադիմությամբ։ Ժամանակակցի վկայությամբ հաջողություններն ավելի կլինեին, եթե ղզլարահայ համայնքը նյութապես օգներ և աջակցեր ուսումնարանի տիրոջը, եթե օրիորդներին անժամանակ չհանեին պանսիոնից (որը սովորություն էր դարձել շատերի մոտ), եթե հայերենի ուսուցիչ-դաստիարակներ հրավիրեին և նպաստեին, որ ուսումնասեր օրիորդները զուրկ չմնային իրենց մայրենի լեզվից[57]։ Ռուս հեղինակի վկայությամբ նույնպես (Ա. Ռուդանովսկին է, որը 1860-ական թթ. սկզբներին այցելել է Ղզլար), քաղաքում ժամանակ առ ժամանակ հայտնվում էին ուսյալ կանայք, մասնավոր դասընթացներ կազմակերպում, բայց աջակցություն չգտնելով տեղի հայ բնակչության շրջանում, շուտով հեռանում էին Ղզլարից։ Առավել ունևոր քաղաքացիներն աղջիկների համար վարձում էին տնային դաստիարակչուհիներ[58]։

Պահպանված տեղեկությունների համաձայն 1872 թ. Ղզլարում բացվել է օրիորդաց ուսումնարան, որի համար նախօրոք տուն էր վարձվել՝ տարեկան 450 ռ. վճարելու պայմանով։ Շուտով տեղի հոգևոր դպրոցի հոգաբարձությունն իգական հոգևոր դպրոցի շինության հարցն է բարձրացնում, ցանկանալով մի օրինավոր և հարմարավետ շինություն ունենալ օրիորդաց ուսումնարանի համար և տնտեսել այն 450 ռ., որ տարեկան տրվում էր որպես վարձ մասնավոր տանտիրոջը[59]։ Հոգաբարձությունը քաղաքային ժողովում հասարակությանը հայտնում է, որ մտադիր է օրիորդաց դպրոցի համար Լուսավորիչ եկեղեցու ընդարձակ բակում շենք կառուցել, բայց քանի որ այդ գործի համար հոգաբարձության ունեցած գումարը չի բավարարի, ուստի հոգաբարձությունը խնդրում է հասարակությանը՝ համաձայնել դպրոցական գումարին միավորել և այն միջոցները, որոնք Աստվածամայր եկեղեցու երեցփոխները մտադիր են ծախսել տեղի առաջնորդարանը նորոգելու համար։ Այսպիսով, Լուսավորիչ եկեղեցու բակում (ուր գտնվում էր արական դպրոցը) կպատրաստվեր իգական դպրոցի շենքը, որի մի հարկում կտեղավորվեր առաջնորդարանը։ Ղզլարահայ հասարակությունը թեև տալիս է իր համաձայնությունը գումարները միավորելու համար, սակայն ժողովրդի մի մասը, հատկապես ցածր խավի ներկայացուցիչները, կարդում ենք Ղզլարից «Մշակի» խմբագրությանն ուղարկված նամակում, չհասկացան հոգաբարձության երկուստեք օգտակար առաջարկությունը թե՛ դպրոցի և թե՛ եկեղեցու համար, կրոնական նշանակություն տվեցին հարցին, պնդելով, որ եթե առաջնորդարանը տեղափոխվի իր այժմյան տեղից և գտնվի օրիորդաց ուսումնարանի համար նախատեսված տանը, Լուսավորիչ եկեղեցու բակում, ապա Աստվածամայր եկեղեցին կանշքանա և կկորցնի իր ավագության նշանակությունը[60]։ Թղթակցություններից տեղեկանում ենք, որ, իրոք, իգական ուսումնարանի շինության հարցը տաք վիճաբանությունների տեղիք է տվել ղզլարահայ հասարակության տարբեր շերտերում։ Թերևս իրավացի էին Աստվածամայր եկեղեցու շուրջը խմբված չունևոր ղզլարահայերը, քանի որ աշակերտուհիները, որոնք մեծ մասամբ նրանց դուստրերն էին լինելու, մեծ նեղություններ էին կրելու ձմռան ցրտերին կամ գարնան անտանելի ցեխին բավական հեռավորության վրա գտնվող նորաշեն ուսումնարանը հաճախելիս[61]։

Ղզլարի «Մարիամյան» օրիորդաց ուսումնարանը[62], տարիներ շարու-

---

57 «Ծռաքաղ», 1860, Բ, տետրակ 2, էջ 34։

58 «Кавказ», 1864, № 95.

59 «Մշակ», 1874, № 28, էջ 2—3, № 33, էջ 2։

60 Նույն տեղում, 1874, № 33, էջ 2։

61 Նույն տեղում, № 28, էջ 2—3։

62 Դպրոցը «Մարիամյան» է կոչվել Ղզլարի բարեպաշտ տիկին Մարիամ Իզմիրյանի անունով, որը դպրոցի հիմնադրման տարում նվիրել էր 2000 ռ. («Ararat», 1872, № 3, էջ 205—206)։

նակ չունենալով սեփական գպրոցական շինություն, հարկադրված էր տեղավորվել վարձով, գանազան անհարմար բնակարաններում, որը էապես վնասել է ուսումնական գործին։ 1883 թ. Ղզլարցի Գ. Մամաջանյանը, որն ընտրվել էր օրիորդաց գպրաան շինության հոգաբարձու, հասարակությանը հայտնում է իգական ուսումնարանին սի շքեղ, երկհարկանի առն ընծայելու մասին[63]։ 1880-ական թթ. վերջերին, ի վերջո այն փոխագրվում է Լուսավորիչ եկեղեցու բակը, ուր և գանվում էր արական հոգևոր ուսումնարանը։ Նույն շրջանի վավերագրերից մեկում հիշատակություն կա այն մասին, որ Ղզլարում բացվել է նաև իգական մասնավոր ուսումնարան, որի նախաձեռնողն էր Թրքլոսի ս. Գայանե իգական դպրոցի շրջանավարտ Նինա Անանովան (Շերմազանյանց)։ Թերեքի մարզի ժողովրդական ուսումնարանների դիրեկտորը 1885 թ. դեկտեմբերին Կովկասի ուսումնական օկրուգի հոգաբարձությանը հայտնում է, որ ինքը նրան թույլատրել է Ղզլարում մասնավոր իգական ուսումնարան բացել[64]։ Ցավոք, ուսումնարանի հետագա գոյության և գործունեության մասին մենք տեղեկություններ չունենք։

XIX դարի 80-ական թթ. կեսերին Ղզլարի արական և իգական ուսումնարաններից յուրաքանչյուրը բաղկացած էր 4 բաժանմունքից (դասարանից), որոնցում ուսանում էին 109 աշակերտ և 70 աշակերտուհիներ[65]։

Այսպիսով, XIX դարում Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերից առաջինը Ղզլարն էր, ուր հիմնվեցին ազգային կրթօջախներ։ Հայկական ուսումնարանները դարձան Ղզլարի և ընդհանրապես ռուսահայերի ազգային-մշակութային կյանքի կարևոր կենտրոններ։ Ղզլարահայերի կրթական գործը հետագա զարգացում ապրեց հազթահարելով ոչ միայն նյութական միջոցների սղությունը, ուսուցչական որակյալ կադրերի պակասը, այլև ազգային փոքրամասնությունների դեմ ինքնակալության կողմից XIX դարի երկրորդ կեսից սկսված ուծացման քաղաքականության հարուցած դժվարությունները։

ИЗ ИСТОРИИ ОРГАНИЗАЦИИ ОБРАЗОВАТЕЛЬНОГО ДЕЛА В КИЗЛЯРЕ (XIX в.)

Л. А. ПОГОСЯН

Резюме

Созданию армянских школ и организации школьно-учебного дела в армянских поселениях Северного Кавказа во многом способствовало активное участие армянского населения в общественно-политической и экономической жизни края. В Кизляре, старейшем из армянских поселений на Северном Кавказе, в начале XIX в. впервые была основана армянская школа, которая сыграла важную роль в национальной и культурной жизни северокавказских армян. Центрами обучения армянского юношества стали также (и не только в Кизляре) частные и государственные (уездные) школы, созданию и обеспечению которых во многом способствовали армянские общества. В начале 70-х гг. XIX в. кизлярская армянская духовная школа, где в основном получали образование дети светского населения, по принципу обучения достигла уровня семинарии. В этот же период армянская община приступает к решению вопроса женского образования.

63 «Մշակ», 1881, № 71, 1883, №№ 54 և 100։

64 Վրացական ԽՍՀ ԿՊՊԱ, ֆ. 422, ց. 1, գ. 2475, թ. 2։

65 «Նոր դար», 1888, № 55, էջ 2։